եւ գործադրելն իսկ միեւնոյն միջոցին կը կատարուին։ Հին գպրոցի տեղւոյն վրայ կը բարձրանայ հոյակապ, վայելչակերտ եւ ամրակառոյց շէնք մի, արժանի ծնունդ զայն կառուցանող վսեմ Անձնաւորութեան մտացին եւ առատաձեռնութեան։ Իսկ իւր այլ ծածուկ կամ յայտնի բարեգործութիւնքն այնքան բազմագիմի եւ բազմազան են՝ որ մի առ մի թուել անհնար է։ Կարող ենք համարձակ ըսել՝ թէ իւրաքանչիւր օր արեւն չէր խնայեր ի մուտս առանց այս նշանաւոր Հանգուցելոյն մի նոր բարեգործութիւնը տեսնելու։ Կը բաւէ միայն ըսել՝ թէ չկար հանրագիտային կարեւորութիւն ունեցող օր եւ է ձեռնարկ, թէ սատ ի Զմիւռնիա եւ թէ արտաքոյ, կենդրոնի կամ գաւառաց մէջ, ուր չերեւար Նորին Վսեմութեան գործնական մեծագործ օժանդակութիւնը։

Ես ինքն իսկ, Տեառք, քանի՛ շնորհապարտ եմ Վսեմական Հանգուցելոյն։ Զի երկու տարի յառաջ երբ գծելոյ հիւանդութեան մի բոյժ գտնելու համար ի Վիեննա անցնել ստիպուեցայ, զայս բազմաձախ գործ կատարելու կարող եղայ գրեթէ մի միայն այս Վսեմ. Բարերարին իշխանական առատաձեռնութեան շնորհիւ։

Վիեննա գտնուած ժամանակս երբ իմացայ թէ Վսեմ. Հանգուցեալն ձեռնարկած էր Ս. Մեսրոպեան վարժարանի ի հիմանց նորոգութեան գրեցի առ ինքն այսպէս՝ «Վսեմաշուք Տէր։ Ձեր Վսեմութեան համար մեր գովեստներն այլ եւս սպառեցան, եւ սակայն Ձեր ի հանդէս բերած հանրօգուտ բարեգործութիւնքն անսպառելի կը թուին։ Իշխէ՛ թէ անսպառ լինին նաեւ Ձեր Վսեմութեան թանկագին կենաց օրերու։ Այսպէս կը խորհէի եւ կը գրէի եւ, ինչպէս նաեւ տարակոյս չունիմ՝ թէ ամէն հաւատք, խիղճ եւ զգացում ունեցող անձինք ալ այսպէս կը խորհին։ Բայց, ափսո՛ս, մեռանա՛ս օրայ եւ ընդհանրի ամէն աղօթքներն, թշուառաց եւ տառապեալց օրտեռանդն մաղթանքներն չզօրեցին գիմադրել Նորին Վսեմութեան օրսին մէջ սպրդած հիւանդութեան, օր անգգալի այլ յարատեւ կերպիւ շարունակելով իւր ուերիչ գործն գոգդես ակնթարթի մը մէջ տապալեց զայս հոյակապ Անձնաւորութիւն։

Ափսո՛ս, բէ՛ ափսո՛ս, այսպիսի հոյակապ Անձնաւորութիւն մի, ընդհանուր Հայոց պարծանաց պարծանք եղող այս մեծանուն Բարերարն ալ եւս է։ Հարուստ, բարեգործիրն, աղքատն եւ թշուառն հաւատարպէս կ'ապատաուին եւ կ'ողբան այս ազիզորմ եւ անդարմանելի կորուստը . . .։ Բայց ալ. Վսեմաշուք Յովհաննէս Իփ. Սպարթիպեան մեռած չէ։ Նա գեղցաւ իբր ճշմարիտ եւ կատարեալ մարդ իւր անունն եւ ինքզինքն անմահացընել՝ նոյն իսկ իւր կենդանութեան ժամանակ։ Նորա ի հանդէս բերած չքնաղ մեծագործութիւնք գարուց ի դարս եւ քան զմեզ շատ աւելի զարդարօր եւ ճաշակաւոր կերպիւ պիտի յորիներն իրեն արժանի ներքոգրեր։ Նա կ'ապրի եւ պիտի ապրի յաւէրժ հաւատք, խիղճ եւ զգացում ունեցող ամէն Հայորդոյն մէջ։ Նորա անունն աղքատին եւ թշուառին օրհնութեանց եւ շնորհակալեաց մշմուռնջներով պիտի յիշատակուի եւ արգէն իսկ անցած է ի շարս ազգային հոյակապ Բարերարաց Պէզճեան, Լազարեանց, Տաճատեան, Մուրատեան եւ Ռաֆայէլեան, եւ օրոց մէջ իրաւամբ առաջնակարգ տեղին գրաւած է իւր սակաւաւոր կենաց մէջ ի հանդէս բերած անհամեմատ մեծագործութեամբք։

Զմիւռնիա, 23 Դեկ. 1887։ Պ. ՆՇԱՆ ՄԻՐԶԱ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Այս ամիս հաղորդելի քաղաքական կարեւոր լուր չկայ. վասն զի գրեթէ ամէն տէրութեանց խորհրդականներն իրենց նոր տարւոյ հանգստեան օրերը կը վայելէին, եւ հազիւ ամսոյն վերջերը դարձեալ գումարեցան։

Գերմանիոյ խորհրդանոցը զբաղեալ է դարձեալ նոր զինուորական օրէնքներով, եւ կը կարծուի որ մօտերս պատերազմական նպատակաւ մեծ փոխառութիւն պիտի ըլլայ։

Աւստրիոյ-Հունգարիոյ կառավարութիւնք խորհրդանոցներէ թոյլտուութիւն կը խնդրեն, որ պահեստի զօրքերը մէկ շաբաթուան համար ի գէն կոչեն, որպէս զի Մանլիխէրի դրութեամբ չինուած նոր հրացանները գործածելու մէջ վարժին։

Գաղղիա Իտալիոյ հետ դնելու վաճառականութեան դաշնից մէջ չկրցաւ միաբանիլ, անոր համար իւր պատգամաւորներն իսկոյն յետս կոչեց։

Սերպիոյ համար նոր տարին Արմատական պաշտօնական մը ծնաւ երուսէ պաշտօնէին զանազանութեամբ, վասն զի Ռիստիչի Ազատամիտ կուսակցութիւնն Արմատականաց հետ չկրցաւ միաբանիլ, մանաւանդ թէ Արմատականք տժգոհ ըլլալով բանադատներն որ Ազատամիտները հրատարակեն եւ վարչութեան դէմն Արմատականաց թողուն։

Պուլկարիոյ վիճակն ալ կարծես թէ անորոշութեան դատապարտուած ալէս մնացած է։ Պուլկարը, կ'երեւայ թէ իրենց այժմեան վիճակին վրայ ընդհանրապէս գոհ են. սակայն փոքրիկ ապստամբական խռովութիւնք միշտ անպակաս են, եւ շատ մը լրագրեր իրենց սպառնալիքներէն չեն դադրիր։

"Պատերազմ պիտի ծագի թէ ոչ։" Այս է օրուան քնաբանը։ Ո՛ր եւ է լրագրը ձեռք առնուիլ եւ թերթենք, կը կարդանք այս կամ այն վեհապետին կամ Քաղաքագիտին խօսքն, որուն վրայ խմբագիրը մեկնութիւններ կու տան եւ թերթերը պատերազմի կամ խաղաղութեան խօսքերէն երբեք զերծ չեն ըլլար։ Այս է լրագրաց ընդհանուր բովանդակութիւնը։ Սակայն չենք վարանիր հաստատելու, թէ ընդհանուր մարդկութիւնն իսկ ուրիշ նշանակալից խօսակցութիւն չունի, բայց՝ թէ պատերազմ պիտի ծագի թէ ոչ։ Այս է վաճառականաց, այս՝ արուեստաւորաց, այս՝ ծնողաց եւ այս՝ որդւոց խօսակցութիւնը։ Բայց ճշմարիտ ու վճռական պատասխան ոչ ոք կընայ տալ։ Ո՛չ վեհապետք, ո՛չ քաղաքագէտք, ո՛չ դեսպանագէտք, միով բանիւ ո՛չ ոք գիտէ թէ այժմեան անորոշ դրութեան վախճանն յինչ պիտի յանգի։

Զարմանք չէ, որ մարդկութիւնն իւր մտադրութեան գլխաւոր առարկան զայս ըրած է։ Դրամական վիճակ տէրութեանց եւ ազգաց, վաճառականութիւն, արուեստք կը կրնայ այս յուսահատական անորոշութեան հիւծիչ մաշիչ լծոյն ներքեւ։ Սակայն եւ այնպէս տիեզերաց այսօրուան ընդհանուր վիճակն այնպէս է, ինչպէս աստի երկու երեք ամիս յառաջ։

Այո՛, Պիզմարք իշխանի պէս քաղաքագէտ մը կ'ըսէ թէ յուսանք որ երկու կամ երեք տարի խաղաղութիւն ունենանք. բայց կը յաւելու, թէ 1870ին համար ալ այսպէս կը խոստանայի, սակայն դէպքերը հակառակը ըներին։ Նմանապէս վեհապետք իրենց զաւակներն եւ այլ առթից մէջ յոյս եւ բաշխեր կու տան, թէ խաղաղութիւնը պիտի պահպանուի եւ թէ իրենց ամէն ճգամբ պիտի չանան նոյնը պահպանելու, սակայն ոչ ոք կը համարձակի հաստատել, թէ խաղաղութեան վրդովմամն պատճառները փարատած են եւ թէ ո՛չ եւս երկիւղ կամ առիթ կայ պատերազմի։

Այս է վիճակ այսօրուան քաղաքական դրութեան տիեզերաց. բայց այսու ամենայնիւ մենք միշտ այն մտաց վրայ ենք, թէ վեհապետք ու քաղաքագէտք վերջապէս հնարք ու միջոց գտնել պիտի չանան այս անհամոյ դրութեան վերջ տալու։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ
Հ. ՌԱՓԱՅԷԼ Վ. ՊԱՐՈՆԱ
ՎԻԵՆՆԱ, ՄԽԻԹԱՐԵԱՆ ՑՈՒՐԱՆ (W. HEINRICH)

digitised by A.R.A.R.@